ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՄՁ ԶԱԿ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՆՆԴԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՓՄՁ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ և ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍԵՄԻՆԱՐ/ԴԱՍԸՆԹԱՑԻ, ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ ՄՇԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԾՁԲ-2018/11

ք. Երևան «17» 04. 2018թ.

«Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը ի դեմս տնօրեն Լ. Մնացականյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Ինթեգրեյթիդ մենեջմենթ սլուշնս>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը <<**Ընդլայնում հանուն զարգացման**>> ծրագրի շրջանակներում ստանձնում է **Սննդի վերամշակման ոլորտի հայաստանյան ՓՄՁ սուբյեկտների միջազգայնացման ստանդարտների և անհրաժեշտ միջազգային սերտիֆիկատների ձեռք բերման վերաբերյալ սեմինար/դասընթացի, խորհրդատվության կազմակերպման, արտահանման ճանապարհային քարտեզի մշակման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **4,120,000 (չորս միլիոն հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն

իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամ	«Ինթեգրեյթիդ մենեջմենթ սլուշնս» ՍՊԸ
ք. Երևան, Մ.Մկրտչյան 5ա	ք. Երևան, Դրոյի 16շ, բն.20
Կոնվերսբանկ ԲԲԸ	Ինեկոբանկ ՓԲԸ
հ/հ 1930059757872400	հ/հ 2050022268891001
ՀՎՀՀ 02562459	ՀՎՀՀ 01006701
Տնօրեն՝ Լ. Մնացականյան	Տնօրեն՝ Ա. Բաղդասարյան
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/

Հավելված N 1
« 17» 04.2018թ. կնքված
ՓՄՁ-ՀԱԿ-ԳՀԾՁԲ-2018/11 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	**գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)**	**տեխնիկական բնութագիրը**	**չափման միավորը**	**ընդհանուր գինը/ՀՀ դրամ**	**ընդհանուր քանակը**	**մատուցման**	
						հասցեն	Ժամկետը**
1	80531110	Սննդի վերամշակման ոլորտի հայաստանյան ՓՄՁ սուբյեկտների միջազգայնացման ստանդարտների և անհրաժեշտ միջազգային սերտիֆիկատների ձեռք բերման վերաբերյալ սեմինար/դասընթացի, խորհրդատվության կազմակերպման և անցկացման, ինչպես նաև արտահանման ճանապարհային քարտեզի մշակման ծառայություններ. Ընդհանուր տեղեկատվություն ծառայության վերաբերյալ Ծառայության բնույթը: *Գործարար ուսուցողական-խորհրդատվական ծառայություններ* Ծառայության մատուցման վայրը: *ք. Երևան* Թիրախային խումբ: *Սննդի վերամշակման ոլորտի ՓՄՁ սուբյեկտներ, որոնք ունեն միջազգայնացման/արտահանման պոտենցիալ:* Ծրագրի հիմնական նպատակն է՝ աջակցել սննդի վերամշակման ոլորտում գործող տեղական ՓՄՁ-ներին դեպի միջազգային շուկա առաջմղման հարցում: Աջակցության հիմնական գործիքներն են՝ • թեմատիկ դասընթացներ (առնվազն 40 ժամ), • անհատական խորհրդատվություն՝ ներառյալ աջակցություն պոտենցյալ գործընկերների որոնման և կապերի հաստատման հարցերում (առնվազն 10 ժամ յուրաքանչյուր ՓՄՁ-ի համար) • Ճանապարհային քարտեզի մշակում: Որպես թիրախային խմբեր պետք է լինեն սննդի վերամշակման ոլորտում գործունեություն ծավալող ՓՄՁ-ներ:	դրամ	**4,120,000**	1	Ք.Երևան	Պայմագրի կնքման օրվանից 5 ամիս **(2018թ. ապրիլ-օգոստոս)**

Ակնկալվող արդյունքներն են՝

- Ծրագրի ավարտին միջազգային շուկա, մասնավորապես՝ Եվրոպական շուկա դուրս գալու համար անհրաժեշտ ամբողջ գործընթացին լավատեղյակ վերապատրաստված առնվազն 15 ՓՄՁ-ներ,
- Միջազգային, մասնավորապես՝ եվրոպական շուկա դուրս գալու համար անհրաժեշտ ամբողջ գործընթացի վերաբերյալ անհատական խորհրդատվություն (ներառյալ անհատական գործողությունների հակիրճ նկարագրություն) ստացած առնվազն 10 ՓՄՁ-ներ, որոնք պոտենցիալ գործընկերի առկայության դեպքում լիարժեք պատրաստ կլինեն (անհրաժեշտ սերտիֆիկատների առկայություն, եվրոպական բոլոր պահանջներին և ստանդարտներին լիարժեք համապատասխանություն) արտահանել իրենց արտադրանքը Եվրոպա:
- Առնվազն 10 ՓՄՁ-երի համար մշակված արտահանման/միջազգայնացման անհրաժեշտ անհատական գործողությունների հակիրճ նկարագրություն, գործողությունների ծրագիր:
- Անցկացված դասընթաց/սեմինարի և անհատական խորհրդատվության արդյունքում դեպի Եվրոպա իր արտադրանքը արտահանման պատրաստ 5 ՓՄՁ-ներ:
- Հայաստանյան ՓՄՁ սուբյեկտների միջազգայնացման, մասնավորպես՝ եվրոպական շուկա դուրս գալու համար անհրաժեշտ գործողությունների և ընթացակարգերի վերաբերյալ ճանապարհային քարտեզ՝ մշակված նախապես անցկացված դասընթացների և խորհրդատվության արդյունքների հիման վրա:

Նախատեսված գործողությունները.

N	Գործողություն
1.	Սեմինար/դասընթացի և անհատական խորհրդատվության անցկացման մանրամասն մեթոդաբանության ներկայացում Պատվիրատուին Մեթոդաբանությունը պետք է բաղկացած լինի հետևյալ բաժիններից՝ • Մեթոդաբաության ներածական հատված, ուր պետք է մանրամասն ներկայացվի և հիմնավորվի ընտրված մեթոդաբանությունը և դրա համապատասխանությունը սեմինար/դասընթացի և անհատական խորհրդատվության բուն թեմային և խնդիրներին • Մանրամասն և առանձին մշակված երկու ժամանակացույց՝ սեմինար/դասընթացի և անհատական խորհրդատվության համար, ուր պետք է նշված լինի դրանց ընդհանուր տևողությունը, ինչպես նաև բաշխվածությունը, ժամային տևողությունը և բովանդակությունը ըստ օրերի/ժամերի: • Անհրաժեշտության դեպքում՝ ըստ Պատվիրատուի պահանջների, Կատարողը պետք է կատարի բոլոր անհրաժեշտ փոփոխություններն իր կողմից ներկայացված մեթոդաբանության մեջ:
2.	Մասնակիցների հավաքագրում (վերջնական ընտրություն) Կատարողը պետք է ուսումնասիրի Պատվիրատուի կոմից նախապես հավաքագրված և ցուցակավորված ՓՄՁ-ների ցանկը և ընտրի առնվազն 15 մասնակից, որոնք, ըստ փորձագետի, առավելագույնս համապատասխանում են եվրոպական շուկա մուտք գործելու համար անհրաժեշտ պայմաններին և որոնք փորձագետի կողմից անցկացվելիք սեմինար/դասընթացի և անհատական խորհրդատվության արդյունքում պատրաստ կլինեն արտադրանքը միջազգային/ եվրոպական շուկա արտահանելուն: Մասնակիցների հավաքագրման նպատակով Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից կտրամադրվեն ՓՄՁ սուբյեկտների նախնական ցուցակները: Ընտրության չափորոշիչները պետք է համաձայնեցվեն Պատվիրատուի հետ:

3.	Սեմինար/դասընթացի կազմակերպում/անցկացում Կատարողը պետք է պատշաճ կերպով՝ ըստ նախապես իր կողմից տրամադրած և Պատվիրատուի կողմից հաստատված մեթոդաբանության և ժամանակացույցի կազմակերպի և անցկացնի արդյունավետ սեմինար/դասընթաց, որի արդյունքները լիարժեք կհամապատասխանեն սույն տեխնիկական արաջադրանքում ներկայացված ակնկալվող արդյունքներին և խնդիրներին: Մասնակիցների գիտելիքների գնահատման նպատակով Կատարողը պետք է մշակի և Պատվիրատու հաստատմանը ներկայացնի մինչ և հետդասընթացային գնահատման հարցաշարեր: Սեմինար/դասընթացի ավարտին Կատարողը, անհատական խորհրդատվություն տրամադրելու նպատակով, դասընթացի, ինչպես նաև ՓՄՁ-ի կարողությունների գնահատման արդյունքների հիման վրա պետք է ընտրի առնվազն 10 ՓՄՁ-ների, որոնք առավելագույնս պատրաստ կլինեն դուրս գալ եվրոպական շուկա:
4.	Անհատական խորհրդատվության կազմակերպում և անհատական գործողությունների հակիրճ նկարագրությունների տրամադրում Կատարողը պետք է պատշաճ կերպով՝ ըստ նախապես տրամադրված և Պատվիրատու կողմից հաստատված մեթոդաբանության և ժամանակացույցի կազմակերպի և անցկացնի արդյունավետ անհատական խորհրդատվություն, որի արդյունքները լիարժեք կհամապատասխանեն սույն տեխնիկական արաջադրանքում ներկայացված ակնկալվող արդյունքներին և խնդիրներին: Բացի այդ, որպես խորհրդատվական ծառայության արդյունք, Կատարողը ընտրված առնվազն 10 ՓՄՁ-երի համար պետք է մշակի արտահանման/միջազգայնացման անհրաժեշտ անհատական գործողությունների հակիրճ նկարագրություն, գործողությունների ծրագիր:
5.	Միջնորդավորված աջակցության տրամադրում Կատարողը պետք է միջնորդավորված աջակցության տրամադրի նախապես իր և Պատվիրատուի կողմից համատեղ ընտրված 5 ՓՄՁ-ներին՝ արտադրանքը Եվրոպա արտահանելու նպատակով գործընկերների որոնման, պոտենցյալ գործընկերոջ հետ բանակցությունների ընթացքում, ինչպես նաև արտադրանքի արտահանման ժամանակ այլ տեխնիկական և փաստաթղթավորման հարցերում:
6.	Ճանապարհային քարտեզի մշակում Վերը նշված գործողությունների ավարտին Կատարողը, հիմնվելով իր կողմից անցկացված դասընթաց/սեմինարի, անհատական խորհրդատվության, ինչպես նաև միջնորդավորված աջակցության արդյունքների վրա, պետք է մշակի մանրամասն ճանապարհային քարտեզ, որը պետք է լինի գործուն ուղեցույց գործարարի համար՝ արտադրանքը եվրոպա արտահանելու գործընթացում: Անհրաժեշտության դեպքում, Պատվիրատուի պահանջով, փորձագետը պետք է կատարի բոլոր անհրաժեշտ փոփոխություններն իր կողմից ներկայացված ճանապարհային քարտեզում:

Հաշվետվությունների նեկայացում.

Կատարողը պետք է ներկայացնի ընթացիկ և վերջնական հաշվետվություններ, և այլ հարակից փաստաթղթեր Պատվիրատուին անցկացված դասընթաց/սեմինսարի, անհատական խորհրդատվության, միջնորդավորված աջակցության, ինչպես նաև մշակված ճանապարհային քարտեզի վերաբերյալ:

Պետք է ներկայացվեն հետևյալ ընթացիկ հաշվետվությունները.

- Գործողություն 1 և 2 ավարտից հետո

- Գործողություն 3 -ի ավարտից հետո

Փորձագետներ.

Կատարողը պարտավոր է ծառայությունների մատուցման համար ապահովել առնվազն մեկ հիմնական փորձագետ, ով պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին՝

Նվազագույնը 3 տարվա աշխատանքային դրական փորձ սննդի վերամշակման ոլորտում բիզնեսի միջազգայնացման/արտահանման, մասնավորապես եվրոպական շուկա, ուղղությամբ տրամադրված գործարար ծառայությունների ոլորտում:

Կատարողը ըստ անհրաժեշտության և ծառայությունների բնույթից կախված կարող է ներգրավել այլ փորձագետներ, որոնց թեկնածությունները պետք է համաձայնեցվեն Պատվիրատուի հետ:

Կատարողը պարտավոր է ապահովել ծառայությունների մատուցման ընթացքում անհրաժեշտ բոլոր նյութերը և պարագաները, բացառությամբ դասընթացների անցկացման վայրերի, որոնք կտրամադրվեն Պատվիրատուի կողմից:

Ծառայությունների մատուցման ժամկետները և վճարման կարգը.

Ծառայության մատուցման ժամկետն է. 5 ամիս (2018թ. ապրիլ-օգոստոս):

Նախնական ժամանակացույց.

Գործողություն/Ամիս	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր
Գործողություն 1					
Գործողություն 2					
Գործողություն 3					
Գործողություն 4					
Գործողություն 5					

Վճարման կարգը.

1. Մայիս 2018, պայմանագրի արժեքի 30%-ը՝ գործողություն 1 և 2 ավարտից հետո:
2. Հուլիս 2018, պայմանագրի արժեքի 40%-ը՝ գործողություն 3 -ի ավարտից հետո:
3. Օգոստոս 2018, վերջնավճար պայմանագրի արժեքի 30%՝ ավարտական հաշվետվությունը ներկայացնելուց հետո:

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամ
ք. Երևան, Մ. Մկրտչյան 5ա
Կոնվերսբանկ ԲԲԸ
Հ/Հ 1930059757872400
ՀՎՀՀ 02562459
Տնօրեն՝ Լ. Մնացականյան

Կ.Տ

/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ
«Ինթեգրեյթիդ մենեջմենթ սլուշնս» ՍՊԸ
ք. Երևան, Դրոյի 16շ, բն. 20
Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 2050022268891001
ՀՎՀՀ 01006701
Տնօրեն՝ Ա. Թաղդասարյան

Կ.Տ

/ստորագրություն/

Հավելված N 2
« 17 » 04 2018թ. կնքված
ՓՄՁ-ՀԱԿ-ԳՀԾՁԲ-2018/11 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	80531110	Սննդի վերամշակման ոլորտի հայաստանյան ՓՄՁ սուբյեկտների միջազգայնացման ստանդարտների և անհրաժեշտ միջազգային սերտիֆիկատների ձեռք բերման վերաբերյալ սեմինար/դասընթացի, խորհրդատվության կազմակերպման, արտահանման ճանապարհային քարտեզի մշակման ծառայություններ	-	-	-	-	1,236,000	1,236,000	2,884,000	4,120,000	4,120,000	4,120,000	4,120,000	4,120,000	4,120,000

**Գումարները լրացված են աճողական կարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի ՓՄՁ ՀԱԿ հիմնադրամ
ք.Երևան, Մ. Մկրտչյան 5ա
Կոնվերսբանկ ԲԲԸ
Հ/Հ 1930059757872400
ՀՎՀՀ 02562459
Տնօրեն՝ Լ. Մնացականյան
_____ Կ.Տ
/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ
«Ինթեգրեյթիդ մենեջմենթ սլուշնս» ՍՊԸ
ք. Երևան, Դրոյի 16շ, բն. 20
Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 20500222688910001
ՀՎՀՀ 01006701
Տնօրեն՝ Մ. Բաղդասարյան
_____ Կ.Տ
/ստորագրություն/

Հավելված 3
« 17 » 04 2018թ. կնքված
ՓՄՁ-ՀԱԿ-ԳՀՄՁԲ-2018/11 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
«<<Ինթեգրեյթիդ մենեջմենթ սլուշնս>> ՍՊԸ	Հայաստանի ՓՄՁ ՀԱԿ հիմնադրամ
Ք.Երևան, Դրոյի 16շ, բն.20	Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա
Ինեկոբանկ ՓԲԸ	Կոնվերսբանկ ԲԲԸ
Հ/Հ 2050022268891001	Հ/Հ 1930059757872400
ՀՎՀՀ 01006701	ՀՎՀՀ 02562459

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2018թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՄՁ ԶԱԿ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՆՆԴԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՈՒՂՈՒՏ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՓՄՁ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ և ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍԵՄԻՆԱՐ/ԴԱՍԸՆԹԱՑԻ, ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ ՄՇԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2018թ.

Պայմանագրի համարը՝ *ՓՄՁ-ՀԱԿ-ԳՀՄՁԲ-2018/11*

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « », 2018թ. դրված գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին:

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շփրադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 13 » 04 2018թ. կնքված
ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԾՁԲ-2018/11 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) և <<Ինթեգրեյթիդ մենեջմենթ սլուշնս>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2018 թ. _____-ին կնքված N *ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԾՁԲ-2018/11* գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին
հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն